## ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1974 թ. հունվար—դեկտեմբեր)

### ԲՈՒԼՂԱՐԻԱ

*Դեկտեմբերին «Երևանի» Վառնայի մասնաճյուղի վարչությունը կազմակերպել է հուշերեկո՝ նվիրված Հակոբ Պարոնյանի ծննդյան 130-ամյակին։ Երգիծաբանի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցել է Զավեն Տերտերյանը։ Պարոնյանի ստեղծագործություններից կարդացվեցին առանձին հատվածներ։ Վերջում ցուցադրվել է «Հայկինոյի» «Տժվժիկ» գեղարվեստական ֆիլմը և հատուկ ֆիլմ՝ նվիրված Հակոբ Պարոնյանին։*

«Երևան», 11 հունվարի

* * *

*Սոֆիայի պետական համալսարանում արդեն չորս տարի է, որ արևելագիտության ամբիոնին կից գործում են հայոց լեզվի ֆակուլտատիվ դասընթացներ, որտեղ հայ և բուլղար երիտասարդները, բացի հայերենից ուսումնասիրում են հայ ժողովրդի պատմությունը։ Դասընթացները վարում է Երևանի պետական համալսարանում բարձրագույն կրթություն ստացած էդուարդ Սելյանը։ Անցած չորս տարվա ընթացքում դասընթացներն ավարտել են ավելի քան 100 հոգի։ Արևելագիտության ամբիոնին կից գործում է նաև հայագիտական գրադարան։*

«Նոր օր», 26 փետրվարի

* * *

*«Երևանի» Ռուսևի մասնաճյուղի ակումբում փետրվարի 13-ին բեմադրվել է Շիրվանզադեի «Աղգային գործիչ» կատակերգությունը։ Ներկայացումից առաջ Ժ. Փեհլիվանյանը ներկաներին ծանոթացրել է հեղինակի կյանքի և գործի հետ։*

«Երևան», 1 մարտի

* * *

*Սլիվենում մարտի 18-ին «Երևանի» վարչության հրավերով Բուլղար-սովետական տան սրահում դասախոսել է «Երևան» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ Կարո Հայրապետյանը՝ «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը» թեմայով։ Դասախոսությունից հետո ցուցադրվել են երկու կարճամետրաժ ֆիլմեր՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցին և Մատենադարանին։*

«Երևան», 29 մարտի

* * *

*«Երևանի» Սոֆիայի վարչությունը կազմակերպել է դասախոսությունների շարք՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանը։*

«Երևան», 5 ապրիլի

* * *

*Մայիսի 14-ին «Երևանի» վարչության նախաձեռնությամբ կազմակերպվել է հայ մեծ բանաստեղծ Պետրոս Դուրյանին նվիրված հանդես։ Բանաստեղծի կյանքի ու գործունեության մասին բանախոսել է Զատիկ Ղազարոսյանը, նշելով մասնավորապես Դուրյանի պոեզիայի նշանակությունը հայ գրականության համար։*

«Երևան», 31 մայիսի

* * *

*Հուլիսի 7-ին Պլովդիվի հայ մշակույթի տանը տեղի է ունեցել հանդիսություն՝ նվիրված հայ գրերի գյուտին։ Հայ գրերի նշանակության, ինչպես նաև հայոց պատմության ու մշակույթի մասին զեկուցել է Սոնա Համբարձումյանը։ Վերջում տրվել է գրական-գեղարվեստական համերգ։*

«Երևան», 26 հուլիսի

* * *

*Սոֆիայում, Պլովդիվում, Վառնայում, Սլիվենում, Բուրգասում, Խասկովոյում և Սիլիստրայում նոյեմբերի վերջերին տոնվել է Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի 54-րդ տարեդարձը։ Ամենուրեք հանդիսավոր բաժնից հետո տրվել են ճոխ համերգներ։*

«Երևան», 13 դեկտեմբերի

ՌՈՒՄԻՆԻԱ

Բուխարեստում ռումիներեն լույս տեսնող «Tribuna Romaniei» երկշաբաթաթերթը 1974 թ. հունվարի 1-ի բացառիկ համարում մեծ տեղ է հատկացրել հայ մանրանկարչությանը և Ռումինիայում գործող հայ արևելագետներին, հրատարակելով XV դարի երկու մագաղաթյա ձեռագրերի (որոնք այժմ գտնվում են Ռումինիայի Ակադեմիայի մատենադարանում) լուսապատճենները։

Թերթը, ինչպես տեղեկանում ենք «Պայքարից» թղթակցությունից, հանգամանորեն անդրադարձել է հայագետներ՝ պրոֆ. Ն. Յորգայի, Հ. Սիրունու, Արամ Ֆրենկյանի, պրոֆ. Վլադ Բընըցյանուի գործերին։

«Պայքար», 25 հունվարի

* * *

Յոն Ապոստոլ Պոպեսկուն վերահրատարակել է Տրանսիլվանիայի հայկական հեքիաթների ժողովածուն, որը առաջին անգամ լույս էր տեսել 1967-ին։ Այս հատորը հարստացված է նոր հեքիաթներով։ Բանահավաքը իր նախաբանում գրել է. «Այս պատմվածքները հավաքած եմ Թրանսիլվանիո հայկական ֆոլքլոր հավաքողներու գործունեութենեն 70 տարի հետո։ Հավաքած եմ այս ստեղծագործությունները 20 տարվան ընթացքին, ապրելով Թրանսիլվանիո հայերուն միջև, ջանալով լավագույնս հանչսալ անոնց ժողովրդական բանաստեղծությունը։ Բացառիկ ջանասիրությամբ մը ուզեցի ծանոթանալ հայկական հարուստ ֆոլքլորին և այն արձակ դյուցազներգական ստեղծագործությանց, որոնք իրապես յուրահատուկ են Թրանսիլվանիո հայ բնակչության։ Ստեղծագործություններեն շատերը արձանագրված են ռումանական լեզվով, բնակչությունը երկլեզվյան է, նույնիսկ երեք լեզու գիտեն, հունգարերեն ալ։ Այնուհետև, ինչպես հայտնում է «Նոր կյանքը», Պոպեսկուն հակիրճ պատմական ակնարկ է տալիս հայերի Ռումինիայում հաստատվելու մասին։

Հատորը, որի վերնագիրն է «Սոխակներու գեղեցիկը», նկարազարդված է Կեորկե Յոնասի կողմից։

«Նոր կյանք», 24 մայիսի

* * *

Ռումինիայի Արվեստի թանգարանի հովանավորությամբ օգոստոսի 20-ին, Բուխարեստում բացվել է Հրանդ և Բեատրիս Ավագյանների հավաքածու-թանգարանը։ Հավաքածուն բաղկացած է 900 իրերից, որոնց թվում կան պարսկական և XVIII դարի հայկական գորգեր, հինավուրց մետաղյա և քարե իրեր, եվրոպական և արևելյան դարդարանքների արվեստի գործեր։ Այս թանգարանը Բուխարեստում գտնվող հայկական թանգարաններից չորրորդն է։ Առաջինը Թեոտոր Աման թանգարանն է (հիմված 1908-ին), որը պարունակում է Թեոտոր Ամանի նկարների, գծագրությունների, քանդակագործության ճոխ հավաքածու։ Մյուսը՝ քննադատ Գրիգոր Զամպարճյանի թանգարանն է, որը ստեղծվեց 1947-ին։ Նա հավաքել է աշխարհահռչակ նկարիչներ Սեզանի, Ռենուարի, Բոնարի, Դելակրուայի, Մանեի, Պիկասոյի, Գրիգորեսկուի, Ամանի և ուրիշների գործեր, որոնց թիվը կազմում է 250։ 1969-ին չութակահար, քննադատ և երաժշտության պրոֆեսոր Կարպիս Ավագյանի տունը վերածվել է թանգարանի. նա ունեցել է արվեստի թանկարժեք հավաքածու, որ նվիրել է պետությանը, հիմք դնելով այդպիսով երրորդ թանգարանին։

Հրանդ և Բեատրիս Ավագյան հավաքածու-թանգարանի բացումը կատարել է Բուխարեստի պետական թանգարանի տնօրեն տիկին Մարիա Պրոտուլեսկուն, այնուհետև Ռումինիայի թանգարանների ընդհանուր տնօրեն Յուլիան Անտոնեսկուն հանգամանորեն անդրադարձել է եղբայր և քույր Ավագյանների նվիրատվությանը,

«Պայքար», 28 սեպտեմբերի

ՉԱՐԱՎԱՍԱՎԻԱ

Սլովենիայում վերջերս լույս է տեսել Նահապետ Քուչակի տաղերի գիրքը Յվետկո Զագորսկու թարգմանությամբ։ Նա 1969 թ. եղել է Հայաստանում և մասնակցել Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին։ Այդ կապակցությամբ նա հրատարակել է «Հայկական հեքիաթներ» ծավալուն գիրքը, որ ինքը թարգմանել էր սլովեներեն։ Մոտիկից ծանոթանալով հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, Սովետական Հայաստանի առօրյային, Յ. Զագորսկին հայրենիք վերադառնալուց հետո իր տպավորություններն է դրի առել «Հայաստանը բաց թանգարան է» խորագրով ընդարձակ ակնարկաշարում։

«Նոր օր», 20 օգոստոսի

ԼԻԲԱՆԱՆ

Բոստոնում լույս տեսնող «Պայքար» թերթում զետեղված է ընդարձակ թղթակցություն Բեյրութի Հայկազյան կոլեջի գործունեության մասին։ Հայկազյան կոլեջի հայագիտական Ուսմանց կենտրոնը, որը հիմնվել է 1955-ին, հետապնդում է երկու նպատակ. առաջին՝ պատրաստել կրոնական ու ազգային-հասարակական ասպարեզների համար որակյալ մասնագետներ, և երկրորդ դառնալ հայագիտության և Միջին արևելքի ուսումնասիրման համար արդիական միջոցներով օժտված կենտրոն Սփյուռքում։

«Պայքար», 9 և 12 մարտի

ՍԻՐԻԱ

Հալեպի Նոր սերունդ մշակութային միությունը և ուսանողական միությունը փետրվարի 20-ին կազմակերպել են բժիշկ Թորոս Թորանյանի «Գաղութահայ կյանքի գոյատևումը» թեմայով դասախոսությունը։ Վերջում տրվել է նաև գեղարվեստական բաժին՝ բաղկացած հայ դասական գրողների ստեղծագործություններից։

«Արարատ», 28 փետրվարի

* * *

Սեպտեմբերի 28-ին Հալեպում կայացել է Թեքեյան Մշակութային միության նորակառույց սրահի բացման հանդիսավոր արարողությունը. կառույցն իրականացվել է դոկտ. Ռոպեր Ռեպեճյանի հովանավորությամբ, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նվիրատվությամբ։ Բացումը կատարվել է մեծ շուքով։ Բազմաթիվ պաշտոնական կազմակերպություններ ջերմությամբ ողջունել են այդ ձեռնարկումը։

«Զարթոնք», 6 հոկտեմբերի

* * *

Հալեպում արաբերեն լեզվով լույս է տեսել պրոֆ. Ա. Կծոյանի՝ Մխիթար Հերացուն նվիրված աշխատությունը, որը արաբերենի է թարգմանել Նիդար Խալիլին։ Գրքի առաջաբանը, որ գրել է հալեպահայ բժիշկ, գրող Թորոս Թորանյանը, նվիրված է հայ և արաբ բժշկական կապերի ուսումնասիրությանը։

«Արարատ», 26 հոկտեմբերի

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզում լույս է տեսել «Բյուզանդիոն» վերնագրով աշխատություն, որի հեղինակն է Բրնե Կերտանը (Կյումյուշկերտանյան)։ Գրքում մանրամասնորեն խոսվում է Բյուզանդական կայսրության մեջ հայերի կատարած դերի մասին։ Հատորը մեծ հաջողություն է գտել և մինչև այժմ թարգմանվել է հինգ լեզուներով։

«Նոր կյանք», 29 մարտի

* * *

Փարիզի Արևելյան քաղաքակրթություններ և լեզուներ ազգային ինստիտուտը լույս է ընծայել Նահապետ Քուչակի հայրենները՝ «Սիրո երգեր» խորագրով։ Թարգմանությունները կատարել է Վահե Գոգելը։ Գրքի առաջաբանում նա ընթերցողին ծանոթացնում է հայ ժողովրդի պատմությանը, քաղաքակրթությանը, ինչպես նաև պոեզիային, մասնավորապես կանգ առնելով Նահապետ Քուչակի ստեղծագործությունների վրա։ Հատորում ներկայացված են բանաստեղծի 61 առավել աչքի ընկնող հայրենները։

Վահե Գոգելը Փարիզում և Բրյուսելում լույս է ընծայել նաև Դանիել Վարուժանի «Հացին երգը», «Ընտիր բանաստեղծությունները» և հայ դասական ու ժամանակակից բանաստեղծների բազմաթիվ ստեղծագործություններ։

«Գրական թերթ», 12 հուլիսի
«Նոր օր», 9 օգոստոսի

* * *

«Ֆլամարիոն» հրատարակչությունը լույս է ընծայել ֆրանսերեն 215 էջանոց մի գիրք «Voyage en Arménie» վերնագրով, որի հեղինակն է հռչակավոր նկարիչ Գառզուի կինը՝ ֆրանսուհի Նան Գառզուն։ Առաջաբանում սեղմ կերպով տրված է հայոց պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, իսկ այնուհետև՝ ճամփորդական նոթերը Ֆրանսիայից Մոսկվա—Հայաստան։

«Զարթոնք», 13 հուլիսի

ԲԵԼԳԻԱ

Լովենում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հրատարակությամբ լույս է տեսել Սիրարփի Տեր-Ներսեսյանի հոդվածների ժողովածուն՝ «Բյուզանդական և հայկական ուսումնասիրություններ» խորագրով։ Երկհատոր ժողովածուն, որ նվիրված է անվանի գիտնականի գործունեության 50-ամյակին, ընդգրկում է 1927 թ. մինչև 1970 թ. ընթացքում նրա գրած հիսունից ավելի հոդվածները։ Առաջին հատորում զետեղված են հեղինակի անգլերեն և ֆրանսերեն ուսումնասիրությունները, ինչպես նաև անցյալում հայերեն լույս տեսած հոդվածների թարգմանությունները։ Երկրորդ հատորը պարունակում է առաջին հատորի հոդվածների նկարները։

«Զարթոնք», 10 մարտի

ԱՆԳԼԻԱ

Մայիսից Լոնդոնում սկսել է լույս տեսնել «Լոնդոն» անունով հայերեն ամսաթերթ, որի խմբագիրն է Աստուր Կյուլեղյանը։ Թերթը ունի ազգային, գրական-հասարակական բովանդակություն։

«Նոր օր», 2 հուլիսի

* * *

Լոնդոնում հրատարակվել է Լևոն Զավեն Սյուրմելյանի «Անմահության խնձորները» վերնագրով հայ ժողովրդական հեքիաթների 320 էջից բաղկացած ժողովածուն։

«Նոր օր», 9 հուլիսի

* * *

Հ. Բ. Ը. Մ. տեղական մասնաճյուղի նորընտիր վարչությունը, որ գլխավորում է Հ. Մուտաֆյանը, կազմել է իր գործունեության ծրագիրը։ Վարչությունը առաջին հերթին նշել է իր հովանավորության տակ գտնվող «Սահակ—Մեսրոպ» կրթարանի կարևոր դերը լոնդոնահայ երիտասարդ սերնդին կրթություն տալու գործում։ Նա

որոշել է նաև օժանդակել Մշակութային հանձնախմբին և Տիկնանց օժանդակ մարմնին։

Այս տարի առաջին անգամ կենտրոնական Լոնդոնի «Բազմարվեստյան վարժարանի լեզուների կաճառում» 32 լեզուների թվում հաստատվել է է արևմտահայերենի դասընթաց։ Որպես դասախոս հրավիրվել է Լոնդոնի համալսարանի շրջանավարտ Կարպիս Եսայանը։ Հայերեն սովորել ցանկացողների թիվը շատ լինելու պատճառով միանգամից բացվել է երկու դասարան։ Դասընթացներին մասնակցում են երիտասարդ ու տարեց զանազան մասնագիտություններ ունեցող հայեր, ինչպես նաև անգլիացի, շոտլանդացի, իռլանդացի, ֆրանսիացի, գերմանացի, ամերիկացի, նորվեգացի ուսանողներ։

«Զարթոնք», 19 նոյեմբերի

## Ա Մ Ն

Բոստոնում ամերիկահայ նկարիչ Ռիչարդ (Հրաչ) Թաշճյանի ջանքերով ստեղծվել է «Ամերիկայի հայ նկարիչների միություն», որի նպատակն է սերտ կապեր ստեղծել հայրենի և ամերիկահայ նկարիչների միջև, սփյուռքահայությանը ծանոթացնել հայրենի երկրի նկարչական արվեստին։ Միության անդրանիկ ձեռնարկումը Բոստոնում կազմակերպված ցուցահանդես-դասախոսությունն է եղել, որտեղ ներկայացվել են Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի, Գրիգոր Խանջյանի, Մինաս Ավետիսյանի, Հակոբ Հակոբյանի և ուրիշների գործերի վերատպությունները, ցուցադրվել են լուսապատկերներ։ Օրվա բանախոսն է եղել Հրաչ Թաշճյանը։

«Հայրենիքի ձայն», 27 փետրվարի

* * *

Բոստոնում լույս տեսնող «Պայքարի» 1974 թ. մարտի 14-ի և 15-ի համարները ամբողջովին նվիրված են Ներսես Շնորհալուն՝ մահվան 800-ամյակի կապակցությամբ։

«Պայքար», 15 մարտի

* * *

Բոստոնի հեռուստատեսության մարտի 14-ի ծրագրով ցույց է տրվել «XX դարի Հայաստանի նկարիչները» հաղորդումը ամերիկահայ նկարիչների ընկերության նախաձեռնությամբ։

«Պայքար», 26 մարտի

* * *

Նյու-Յորքի Կոլումբիա համալսարանում մարտի 19-ին պ. Հերբըտ Պեթըրզպին դասախոսություն է կարդացել հայերի և ուզբեկների մասին։ Նա վերջերս այցելել է Հայաստան և Ուզբեկստան. ուսումնասիրել է հայ ժողովրդի անցյալ ու ներկա պատմությունը։

«Պայքար», 26 մարտի

* * *

Նյու-Յորքում մայիսի 1-ից սկսել է լույս տեսնել «Արարատ» անունով հայերեն նոր թերթ։ Սկզբում նա լույս է տեսել ամիսը երկու անգամ, իսկ օգոստոսից վեր է ածվելու շաբաթաթերթի։ Թերթի խմբագիրներն են Սամուել Թումանյանը և Հակոբ Նազարենցը։

«Նոր օր», 11 հունիսի

* * *

Հունիսի 7-ին Բոստոնի գիտությունների թանգարանում տեղի է ունեցել հայկական ձեռարվեստների, նկարների ցուցադրություն, որը կազմակերպվել է այդ թանգարանի և Ինթերնեշընել ինստիտուտի նախաձեռնությամբ։ Ցուցահանդեսի նպատակն է եղել օտարներին ծանոթացնել հայկական արվեստի հետ։

«Պայքար», 28 հունիսի

* * *

Հ. Բ. Ը. Միության Նյու-Յորքի կենտրոնի մատենադարանի սրահում հունիսի 14-ին տեղի է ունեցել Հովհաննես Գալփագյանի դասախոսությունը՝ նվիրված XIV—XIX դդ. ռումինահայ գաղութին տրված արքայական հրովարտակների հարցին։

Դասախոսը մանրամասնորեն անդրադարձել է XI—XIV դդ. Հայաստանի քաղաքական դեպքերին, դեպի Մոլդավիա, Բեսարաբիա, Բուկովինա և այլուր արտագաղթի հարցին և հայերի դերին Ռումինիայում։

«Պայքար», 29 հունիսի

* * *

Լոս-Անջելոսի համալսարանի գիտահետազոտական գրադարանի և հայագիտական ամբիոնի նախաձեռնությամբ համալսարանում կազմակերպվել է հայագիտական նյութերի ցուցահանդես, որում տեղ են գրավել ձեռագիր մատյաններ, հնատիպ գրքեր, քարտեզներ, նորագույն շրջանի հայագիտական հրատարակություններ, ազգային ասեղնագործության նմուշներ և բրոնզե ու արծաթե հին հայկական դրամներ։ Ցուցահանդեսում առանձին բաժին է հատկացվել Սովետական Հայաստանում և արտասահմանում հրատարակված այն գրքերին, որոնք պատմում են հայկական ճարտարապետության, պատմական հայտնի հուշարձանների մասին։

«Հայրենիքի ձայն», 21 օգոստոսի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ